ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ ՎԱԼԵՐԻԿԻ

ԲՈՒՀ-ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2026

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Սարգսյան Հայկ Լևոնի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Վարդանյան Գագիկ Իշխանի

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Բարխուդարյան Գոհար Արայի

Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2026 թվականի օգոստոսի 26-ին՝ ժամը 15:00-ին, Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի տնտեսագիտության 015 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0025, ք. Երևան, Աբովյան փող. 52:
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2026 թ. հուլիսի 13-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ՝ Ա.Հ. Հակոբջանյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

<u>Հետազոտության թեմայի արդիականությունը:</u> Բուհ-ձեռնարկություն համագործակցությունը մարդկային կապիտալի զարգացման հիմնական գործոններից մեկն է: Կողմերից յուրաքանչյուրն այս համագործակցությունից ունի իր սպասելիքները: Բուհը շահագրգռված է ձեռնարկությունների հետ համագործակցությամբ՝ ավելի մրցունակ շրջանավարտներ պատրաստելու և աշխատաշուկայի պահանջներին բավարարելու նպատակով: Մյուս կողմից, ձեռնարկությունն ակնկալում է համագործակցության արդյունքում ունենալ առավելագույն գիտելիքներով և անհրաժեշտ հմտություններով կադրեր, որոնց վերապատրաստումը կլինի նվազագույն ծախսերով: Սա, թերևս, *բուհ-ձեռնարկություն գործընկերության ավանդական մեխանիզմն է:* Այսօր, ավելի քան երբևէ, բուհերի դերը չի սահմանափակվում միայն որակյալ մասնագետների և շրջանավարտների պատրաստմամբ կամ ակադեմիական հետազոտությունների իրականացմամբ: Բուհերը պետք է առավելագույնը նպաստեն ուսանողների և դասախոսական անձնակազմի շրջանում ակադեմիական նորարարության և բիզնես գաղափարների մշակմանն ու զարգացմանը:

Այս առումով, բուհի և ձեռնարկության միջև արդյունավետ համագործակցությունն առաջնային նշանակություն ունի, քանի որ, հանդիսանալով կոնկրետ կառուցակարգերով գործիք, այն կարող է բարձրացնել շրջանավարտների զբաղվածությունը, նվազեցնել աշխատաշուկայում առկա անհամապատասխանությունը (Labor Mismatch), բարելավել բարձրագույն կրթության որակն ու արդիականությունը, ամրապնդել կրթական արդյունքների և ձեռնարկությունների կարիքների միջև համապատասխանությունը: Ի վերջո, մակրոտնտեսական մակարդակում բուհ-ձեռնարկություն արդյունավետ գործընկերությունը նպաստում է նորարարական ներուժի, աշխատանքի արտադրողականության և ընդհանուր տնտեսական աճի բարձրացմանը: Ժամանակակից գիտելիքահեն տնտեսության պայմաններում բուհերի և ձեռնարկությունների փոխգործակցությունն այլևս ընտրության հնարավորություն չէ, այլ տնտեսական մրցունակության, նորարարական զարգացման և սոցիալական առաջընթացի ապահովման ռազմավարական անհրաժեշտություն:

Թեև բուհ-ձեռնարկություն համագործակցությունը համաշխարհային մակարդակով լայն ուշադրության է արժանացել թե՛ ակադեմիական, թե՛ քաղաքականության շրջանակներում, այնուամենայնիվ Հայաստանի Հանրապետությունում դրա ներկա վիճակի, մարտահրավերների և զարգացման հնարավորությունների վերաբերյալ համապարփակ հետազոտություններ բավարար չափով իրականացված չեն: Սույն ուսումնասիրությունը նպատակ ունի լրացնել այդ

բացը՝ վերլուծելով Հայաստանի Հանրապետությունում բուհ-ձեռնարկություն համագործակցության ներկայիս վիճակը և բացահայտելով այն հիմնական գործոնները, որոնք նպաստում կամ խոչընդոտում են բուհերի և ձեռնարկությունների միջև արդյունավետ ու կայուն գործընկերության ձևավորմանը:

Չնայած Հայաստանի բարձրագույն կրթության համակարգն ունի զգալի ակադեմիական ներուժ, հարուստ գիտական ավանդույթներ և որակյալ մարդկային կապիտալ, բուհ-ձեռնարկություն համագործակցությունը դեռևս կրում է հատվածային և ոչ համակարգված բնույթ՝ մնալով թերզարգացած ու անբավարար ինստիտուցիոնալացված: Առկա համագործակցության մեխանիզմները հաճախ բնութագրվում են թույլ հաղորդակցության կապուղիներով, ակադեմիական հետազոտությունների սահմանափակ առևտրայնացմամբ, անբավարար ֆինանսական ռեսուրսներով, համապատասխան ինստիտուցիոնալ ենթակառուցվածքների բացակայությամբ և կրթական արդյունքների ու աշխատաշուկայի պահանջների միջև անհամապատասխանությամբ:

<u>Հետազոտության նպատակը:</u> Հետազոտության նպատակը ՀՀ-ում բուհ-ձեռնարկություն գործընկերության զարգացման ներուժի ու ներկա վիճակի վերլուծությունն է, դրա ինստիտուցիոնալ, կազմակերպակառուցվածքային առանձնահատկությունների բացահայտումը, ինչպես նաև գործընկերության մշտադիտարկման և առաջխաղացման համապարփակ մեթոդաբանական շրջանակի մշակումը:

Հետազոտության նպատակի շրջանակում սահմանվել են **հետևյալ խնդիրները.**

- Ուսումնասիրել բուհ-ձեռնարկություն գործընկերության տեսական և մեթոդաբանական հիմքերը՝ բացահայտելով դրա էությունը, դերակատարներին և զարգացման արդի մոտեցումները:
- Վերլուծել բուհ-ձեռնարկություն համագործակցության հիմնական կառուցակարգերը, ինստիտուցիոնալ կառույցները, տեխնոլոգիաների փոխանցման մեխանիզմները և շահակիցների միջև փոխազդեցության առանձնահատկությունները:
- Ուսումնասիրել Եվրոպական միության երկրների և Հայաստանի բուհ–ձեռնարկություն գործընկերությունը խթանող քաղաքականության շրջանակները, նորարարական էկոհամակարգերը, իրավական կարգավորումները, մտավոր սեփականության պաշտպանության մեխանիզմները և միջազգային հետազոտական ծրագրերին մասնակցության փորձը:
- Գնահատել Եվրոպական միության ընտրված երկրներում, անցումային տնտեսություններում և Հայաստանում բուհ–ձեռնարկություն գործընկերության զարգացման մակարդակը՝ հիմնվելով

նորարարության, հետազոտությունների, համագործակցության և աշխատաշուկայի ցուցանիշների վրա։

- Գնահատել Հայաստանում բուհ–ձեռնարկություն գործընկերության ներկա վիճակը՝ բուհերի, ձեռնարկությունների, ուսանողների/շրջանավարտների և պետական կառավարման մարմինների տեսանկյուններից։
- Բացահայտել Հայաստանում բուհ–ձեռնարկություն համագործակցության զարգացմանը խոչընդոտող ինստիտուցիոնալ, իրավական, ֆինանսական և կազմակերպական հիմնական խնդիրներն ու խնդրահարույց հարցերը։
- Վերլուծել ՀՀ բարձրագույն կրթական հաստատություններում կիրառվող համագործակցության ուղիների և ինստիտուցիոնալ աջակցության մեխանիզմների արդյունավետությունն ու կիրառելիությունը։

<u>Հետազոտության օբյեկտը:</u> Հայաստանի Հանրապետությունում բուհ-ձեռնարկություն գործընկերության համակարգն է։ **<u>Հետազոտության առարկան:</u>** Բուհ-ձեռնարկություն համագործակցության ինստիտուցիոնալ կառույցներն են, համագործակցության կապուղիները և բուհերի, ձեռնարկությունների, կառավարության ու ուսանողների/շրջանավարտների միջև փոխգործակցությունը։

<u>Հետազոտության մեթոդաբանական, տեսական և տեղեկատվական հիմքերը:</u> Հետազոտությունում կիրառվել են գիտական ճանաչողության մի շարք մեթոդներ, այդ թվում՝ համեմատական վերլուծության, վերացարկման, ինդուկցիայի և դեդուկցիայի, գրաֆիկական մեկնաբանման, վիճակագրական և էկոնոմետրիկ մոդելավորման մեթոդները, ինչպես նաև էմպիրիկ հետազոտության մեթոդներ՝ հարցումներ, դեպքի ուսումնասիրություններ, ֆոկուս-խմբային քննարկումներ և հարցազրույցներ։

Հետազոտության համար տեսական հիմք են հանդիսացել հայ և օտարազգի ականավոր գիտնականների գիտահետազոտական աշխատությունները, ՀՀ և այլ պետությունների օրենքները, կառավարության որոշումները և այլ նորմատիվ իրավական ակտերը, ինչպես նաև Եվրոպական Միության համապատասխան ռազմավարությունները, քաղաքականության փաստաթղթերը, օրենսդրական շրջանակները և բարձրագույն կրթությանը, հետազոտությանը, նորարարությանն ու տնտեսական զարգացմանը վերաբերող միջազգային զեկույցներն ու հաշվետվությունները։

Տեղեկատվական հիմք են հանդիսացել նաև վերոնշյալ կառույցների պաշտոնական կայքերը, դրանցում հրապարակված տվյալները և պաշտոնական տեղեկագրերը, ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակումները և տվյալների շտեմարանները, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, Էկոնոմիկայի և Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունների պաշտոնական

կայքերը, դրանցում հրապարակված տվյալները, ինչպես նաև Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության STIP տվյալների շտեմարանը, Eurostat վիճակագրական տվյալները, Համաշխարհային բանկի վիճակագրական ցուցանիշների տվյալների շտեմարանը և զեկույցները, Եվրոպական նորարարության գնահատման (European Innovation Scoreboard) տվյալները, «Horizon Europe» տվյալների շտեմարանը և զեկույցները, ՀՀ մտավոր սեփականության գործակալության և Համաշխարհային մտավոր սեփականության կազմակերպության տվյալների բազան և տարեկան հաշվետվությունները:

Հետազոտության էմպիրիկ հիմքը ձևավորվել է առաջնային տվյալների հիման վրա, որոնք ստացվել են բուհերի ներկայացուցիչների, դասախոսական և գիտահետազոտական անձնակազմի, ուսանողների, շրջանավարտների և ձեռնարկությունների ներկայացուցիչների շրջանում անցկացված հարցումների, խորացված հարցազրույցների և ֆոկուս-խմբային քննարկումների արդյունքում:

<u>Հետազոտության գիտական նորույթը</u>: Ատենախոսության հիմնական գիտական արդյունքներն ու նորույթները հետևյալն են.

- Մշակվել և ՀՀ պայմաններին է հարմարեցվել Բուհ–Ձեռնարկություն–Կառավարություն–Ուսանող/Շրջանավարտ (UIGS) ընդլայնված մոդելը, որի հիման վրա կառուցվել է համագործակցության կապուղիների հիերարխիկ շրջանակ:
- Հաշվարկվել է բուհ–ձեռնարկություն համագործակցության ինտենսիվության ինդեքսը (Partnership Intensity Index – PII), որի գործարկման նպատակով կիրառվել է օրդինալ լոգիստիկ ռեգրեսիայի մեթոդը:
- Մշակվել է համագործակցության կապուղիների և ենթատեսակների առանցքային ցուցանիշների գնահատման համակարգ (KPIs), ինչպես նաև առաջարկվել է UIGS ինդեքսի հաշվարկ՝ որպես բուհերի համեմատական վերլուծության և մշտադիտարկման գործիք:
- Բուհ–ձեռնարկություն համագործակցությունն ուսումնասիրվել է բազմաշահակցային (multi-stakeholder) մոտեցմամբ՝ համադրելով բուհերի, ձեռնարկությունների, ուսանողների/շրջանավարտների և կառավարության տեսանկյունները:

<u>Ատենախոսության գործնական նշանակությունը</u>: Ատենախոսության արդյունքների նշանակությունն այն է, որ իրականացված ուսումնասիրությունների արդյունքները, մեթոդաբանական մոտեցումները և գործնական առաջարկությունները կարող են կիրառվել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, էկոնոմիկայի, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունների, Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի, ՀՀ բարձրագույն ուսումնական

հաստատությունների, ձեռնարկությունների ներկայացուցիչների և ոլորտի այլ շահագրգիռ կողմերի կողմից՝ բուհ-ձեռնարկություն համագործակցության զարգացմանն ու ամրապնդմանն ուղղված քաղաքականությունների և ռազմավարությունների մշակման ու իրականացման գործընթացներում:

Ատենախոսությունում առաջարկված Բուհ-Ձեռնարկություն-Կառավարություն-Ուսանող/Շրջանավարտ (UIGS) շրջանակը, Բուհ-ձեռնարկություն համագործակցության ինտենսիվության ինդեքսի հաշվարկման արդյունքները (PII), ինչպես նաև համագործակցության ուղիների հիերարխիկ շրջանակը՝ KPI-ների վրա հիմնված մոնիթորինգի մեթոդաբանությամբ և UIGS ինդեքսի հաշվարկով, կարող են ծառայել որպես գործնական գործիքներ բուհ-ձեռնարկություն համագործակցության գնահատման, մշտադիտարկման, համեմատական վերլուծության և զարգացման համար: Ատենախոսության արդյունքներն ու առաջարկությունները կարող են օգտագործվել որպես ուսումնական և մեթոդական նյութ բարձրագույն կրթության հաստատություններում՝ նորարարությունների կառավարման, բարձրագույն կրթության կառավարման, ձեռնարկատիրության և բուհ-ձեռնարկություն համագործակցությանն առնչվող դասընթացներում: Հետազոտությունը կարող է օգտակար լինել նաև գիտնականների, քաղաքականություն մշակողների, բուհերի ղեկավարների և մասնագետների համար, որոնք հետաքրքրված են նորարարական և համագործակցային ցանցերի զարգացման հարցերով:

<u>Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:</u> Ատենախոսության հիմնական արդյունքները քննարկվել են Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում, ինչպես նաև Վենետիկի Կա՛Ֆոսկարի համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետում:

Ատենախոսության առանձին արդյունքներ ստացվել և օգտագործվել են ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ՝ 21T-5B193 ծածկագրով գիտական թեմայի շրջանակում: Հետազոտության արդյունքները հրապարակվել են մեկ մենագրության և վեց գիտական հոդվածների տեսքով, որոնցից երկուսը տպագրվել են «Scopus» գիտաչափական շտեմարանում ինդեքսավորվող գիտական ամսագրերում, իսկ չորսը՝ գրախոսվող հայկական գիտական հանդեսներում: Ատենախոսության հիմնական արդյունքները ներկայացվել և քննարկվել են «The 4th International Conference on Applied Research in Education» միջազգային գիտաժողովում, որը կազմակերպվել է Հռոմի Վաշինգտոն համալսարանում:

<u>Ատենախոսության կառուցվածքը:</u> Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության հիմնական շարադրանքը 152 էջ է՝ առանց հավելվածների: Աշխատանքը ներառում է 26 աղյուսակ, 46 գրաֆիկ և 95 հղում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **«Ներածություն»** բաժնում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության հիմնական նպատակը, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, աշխատանքի տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը և ստացված հիմնական արդյունքները, ատենախոսության արդյունքների գիտական և գործնական կիրառական նշանակությունը, ինչպես նաև աշխատանքի կառուցվածքն ու ծավալը:

Առաջին գլխում ուսումնասիրվել են ոլորտի հիմնարար տեսական մոդելները՝ «Ազգային նորարարական համակարգեր»-ի հայեցակարգը (National Innovation Systems) (Lundvall, 1985; Nelson, 1993; Freeman, 1995), Triple Helix մոդելը (Etzkowitz & Leydesdorff, 2000), Quadruple/Quintuple Helix մոդելները (Carayannis et al., 2009), «Համալսարանական հետազոտական էկոհամակարգ»-ի հայեցակարգը (University Research Ecosystem) (Pandey & Pattnaik, 2015), «Ձեռնարկատիրական համալսարան» հայեցակարգը (Entrepreneurial University) (Clark, 1998; Etzkowitz, 1983), «Բաց և փակ նորարարության» մոտեցումը (Open and Closed Innovation) (Chesbrough, 2003), «Խելացի մասնագիտացման ռազմավարությունը» (Smart Specialization Strategy) (OECD, 2013), «User-centered Innovation» (Hippel, 2005), «Ուսանողակենտրոն նորարարության հայեցակարգը» (Student-centered Innovation) (Effendi, 2023; Jurgelevicius et al., 2025), ինչպես նաև Industry 5.0 8 հայեցակարգը:

Տեսական վերլուծության արդյունքում հիմնավորվել է, որ գործող Helix մոդելները ուսանողներին և շրջանավարտներին դիտարկում են որպես բուհական համակարգի արդյունք և համագործակցության պասիվ շահառու, մինչդեռ հենց ուսանողներն ու շրջանավարտներն են հանդիսանում գիտելիքի, հմտությունների և նորարարության փոխանցման հիմնական կրողները բուհի և ձեռնարկության միջև: Այդ բացը լրացնելու նպատակով ատենախոսությունում մշակվել է Բուհ-Ձեռնարկություն-Կառավարություն-Ուսանող/Շրջանավարտ (UIGS) ընդլայնված մոդելը, որում ուսանողը/շրջանավարտը ճանաչվում են որպես համագործակցային էկոհամակարգի անկախ և միջնորդ դերակատար *(տե՛ս Գծապատկեր 1):* Առաջարկվող մոդելը չի փոխարինում գործող Triple/Quadruple/Quintuple Helix մոտեցումներին, այլ լրացնում է դրանք՝ ընդգծելով ուսանողների/շրջանավարտների ռազմավարական դերը զբաղվածության, ձեռներեցության, կիրառական հետազոտությունների և գիտելիքի փոխանցման գործընթացներում:



Գծապատկեր 1. Բուհ-Ձեռնարկություն-Կառավարություն-Ուսանող/Շրջանավարտ (UIGS) մոդել[1]

Այս գլխում իրականացվել է նաև համագործակցության կապուղիների առկա դասակարգումների համապարփակ վերլուծություն (Bekkers & Freitas, 2008; Arza, 2010; Fuentes & Dutrénit, 2012; D'Este & Patel, 2007; Perkmann & Walsh, 2007; Chedid & Teixeira, 2018; Franco & Haase, 2015 և այլք)։ Հաշվի առնելով միջազգային փորձը և ՀՀ բարձրագույն կրթական համակարգի առանձնահատկությունները՝ առաջարկվել է համագործակցության կապուղիների հիերարխիկ դասակարգում՝ հինգ մակարդակներով *(տե՛ս Գծապատկեր 2)*։ Հիերարխիկ դասավորության հիմքում ընկած են տեսական գրականությունից բխող տասը չափորոշիչներ։ Համագործակցության յուրաքանչյուր մակարդակ ներառում է կապուղիների ենթատեսակներ։ Նշված ենթատեսակները կիրառվել են հետազոտության էմպիրիկ հարցումներում, և դրանց հիման վրա մշակվել է նաև կատարողականի առանցքային ցուցանիշների (KPI) համակարգը։

Կապուղիների հիերարխիկ շրջանակի գործառնական կիրառման նպատակով յուրաքանչյուր մակարդակի համար մշակվել է կատարողականի առանցքային ցուցանիշների (KPI) համակարգ՝ ընդհանուր 68 ցուցանիշ, որոնք դասակարգվել են ըստ 3 տիպերի՝ Արդյունքային (Outcome, 66%), Արդյունավետության (Efficiency, 15%) և Որակի (Quality, 19%) *(տե՛ս Աղյուսակ 1)*.

[1] Գծապատկերը մշակվել է հեղինակի կողմից։



Գծապատկեր 2. UIGS համագործակցության կապուղիների հիերարխիկ շրջանակ[2]

Աղյուսակ 1.

Կատարողականի առանցքային ցուցանիշների (KPI) տեսակների համամասնությունը՝ ըստ մակարդակների[3]

Մակարդակ	Արդյունքային	Արդյունավետության	Որակի	Ընդ. KPIs
Մակ.1	8	2	4	14
Մակ. 2	6	1	2	9
Մակ. 3	7	2	3	12
Մակ. 4	13	4	2	19
Մակ. 5	11	1	2	14
Ընդ.	**45**	**10**	**13**	**68**

Յուրաքանչյուր KPI գնահատվում է 0-5 սանդղակով, որտեղ 0-ն նշանակում է գործունեության բացակայություն, իսկ 5-ը՝ շատ բարձր մակարդակ: Մակարդակի գնահատականը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$UIGS_i = \Sigma KPI_i / n \quad (1)$$ [4]

Որտեղ՝ $UIGS_i$-ն տվյալ (i) մակարդակի գնահատականն է, KPI_i-ն՝ մակարդակում ընդգրկված յուրաքանչյուր ցուցանիշի գնահատականը, n-ը՝ մակարդակում ընդգրկված ցուցանիշների ընդհանուր թիվը:

[2] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից:
[3] Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ մշակված կատարողականի առանցքային ցուցանիշների հիման վրա:
[4] Բանաձևը կազմվել է հեղինակի կողմից:

Համագործակցության ամփոփ UIGS ինդեքսը հաշվարկվում է որպես հինգ մակարդակների գնահատականների միջին թվաբանական.

$$UIGS = (UIGS_1 + UIGS_2 + UIGS_3 + UIGS_4 + UIGS_5) / 5 \quad (2)$$ [5]

Ստացված արժեքը մեկնաբանվում է հետևյալ հասունության սանդղակով[6]՝

- 0.0–1.0 սկզբնական (Initial);
- 1.1–2.0 – ձևավորվող (Emerging);
- 2.1–3.0 – զարգացող (Developing);
- 3.1–4.0 – զարգացած (Advanced);
- 4.1–5.0 – հասուն (Mature)

UIGS ինդեքսը բուհերին հնարավորություն է տալիս բացահայտելու իրենց դիրքը համագործակցության հիերարխիայում, համեմատելու սեփական դիրքն այլ բուհերի հետ և ժամանակի ընթացքում մշտադիտարկելու առաջընթացը դեպի գործընկերության առավել հասուն ձևեր:

Գլխի եզրափակիչ մասում, հենվելով Arza-ի (2010) դասակարգման վրա և ավելացնելով ինստիտուցիոնալ ու սոցիալական չափումները, բուհի և ձեռնարկության համար համագործակցության օգուտներն ու կորուստները համակարգվել են չորս հարթություններում՝ մտավոր, տնտեսական, սոցիալական և ինստիտուցիոնալ:

Ատենախոսության երկրորդ՝ «Բուհ-ձեռնարկություն գործընկերությունը Եվրոպական միությունում և զարգացող տնտեսություններում» գլխում վերլուծվել են ԵՄ քաղաքականության հանգուցային փուլերը (1984 թ. առաջին շրջանակային ծրագրից մինչև 2026 թ. նախատեսվող Եվրոպական նորարարության ակտը): Էմպիրիկ վերլուծության հիմքում դրվել են զբաղվածության և NEET ցուցանիշները, Եվրոպական նորարարության ինդեքսը (EIS), R&D ծախսերի GERD/HERD/GBARD/BERD ցուցանիշները և հանրային-մասնավոր համատեղ հրապարակումները: Վերլուծությունը ցույց է տվել, որ քաղաքականության շրջանակներն ու ֆինանսական ներդրումները, թեև անհրաժեշտ, բավարար պայմաններ չեն արդյունավետ գործընկերության համար: Չորս երկրների՝ Շվեդիայի, Գերմանիայի, Իտալիայի և Բուլղարիայի համեմատական վերլուծության արդյունքում բացահայտվել են բուհ-ձեռնարկություն համագործակցության լավագույն մոդելները:

Սույն գլխում վերլուծվել է նաև Հայաստանում բուհ-ձեռնարկություն գործընկերության օրենսդրահիրավական և ռազմավարական դաշտը:

---

[5] Բանաձևը կազմված է հեղինակի կողմից:
[6] Սանդղակը մշակվել է հեղինակի կողմից:

Հայաստանի դիրքը գնահատվել է նաև տարածաշրջանային և հաջողված անցումային տնտեսությունների (Վրաստան, Ադրբեջան, Էստոնիա, Լիտվա, Լեհաստան) հետ համեմատությամբ: Բացահայտվել է, որ Հայաստանի R&D ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ, չնայած 2024 թ. մինչև 0.29% աճին, զգալիորեն զիջում են Էստոնիայի (1.99%), Լեհաստանի (1.70%) և Լիտվայի ցուցանիշներին:

Այնուհետև վերլուծվել են 2018–2022 թթ. գիտական հրապարակումների ցուցանիշները: Հարավային Կովկասի տարածաշրջանում գիտական հրապարակումների ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Ադրբեջանում, մինչդեռ Հայաստանը դրսևորել է ավելի բարձր աճի տեմպ, քան Վրաստանը՝ 2022 թ. դառնալով տարածաշրջանում գիտական հրապարակումների ծավալով երկրորդ երկիրը: Չնայած այս առաջընթացին՝ տարածաշրջանն ամբողջությամբ գիտական արտադրողականությամբ զգալիորեն զիջում է Էստոնիային, Լիտվային և Լեհաստանին:

Ընտրված երկրների համար վերլուծվել է նաև **երիտասարդների գործազրկության մակարդակը (15–24 տարեկան, աշխատուժի %-ով, ԱՄԿ գնահատական)**: Ըստ 2021–2025 թթ. տվյալների՝ Հարավային Կովկասում առավել խոցելի են Հայաստանը և Վրաստանը. *(տե՛ս Գծապատկեր 3):*



Գծապատկեր 3. Երիտասարդների (15-24 տ.) գործազրկության մակարդակն ընտրված երկրներում, 2025 թ., %[7]

«Horizon Europe» ծրագրում Հայաստանը 2025 թ. ապահովել է 27 ստորագրված դրամաշնորհ՝ 10.75% հաջողության մակարդակով (ծրագրի միջինից բարձր) և շուրջ 8.66 մլն եվրո ֆինանսավորմամբ, սակայն մասնակցությունը կենտրոնացած է սահմանափակ թվով կազմակերպությունների շրջանում, իսկ ՓՄՁ-ների ներգրավվածությունը նվազագույն է (14 հայտ):

[7] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ ԱՄԿ գնահատականի հիման վրա, Համաշխարհային բանկի հրապարակած տվյալների հիման վրա:

Համաձայն ՀՀ մտավոր սեփականության գրասենյակի տվյալների՝ արտոնագրային ակտիվությունը մնում է սահմանափակ՝ 2025 թ. ներկայացվել է 106 հայտ, որից տրամադրվել է 72 արտոնագիր, ընդ որում՝ բուհերը (ՀԱՊՀ, ԵՊՀ, ՀԱԱՀ և այլն) առաջատար հայտատուների թվում են։ Ըստ WIPO-ի տվյալների՝ ռեզիդենտ հայտատուների արտոնագրային հայտերի ամենաբարձր ցուցանիշը Հայաստանում գրանցվել է 2020 թ.՝ 114 հայտ, իսկ ամենացածրը՝ 2022 թ.՝ ընդամենը 61 հայտ։

Այսպիսով, Հայաստանը համեմատաբար հաջողությամբ ապահովում է գիտելիքի ստեղծումը, սակայն զգալի դժվարություններ ունի դրա առևտրայնացման և տնտեսության մեջ արդյունավետ կիրառման ուղղությամբ։

Ատենախոսության երրորդ՝ «Բուհ-ձեռնարկություն գործընկերության համեմատական էմպիրիկ գնահատում» գլխում UIGS մոդելի տրամաբանությամբ իրականացվել է էմպիրիկ հետազոտություն՝

- Ուսանողների/շրջանավարտների հարցումներ՝ Վենետիկի Կա՛Ֆոսկարի համալսարան (197 մասնակից) և Երևանի պետական համալսարան (189 մասնակից),
- ՀՀ վեց խոշոր բուհերի (ԵՊՀ, ՀՊՏՀ, ՀԱՊՀ, ՀԱԱՀ, ԲՊՀ, ՃՇՀԱՀ) վարչական և ակադեմիական ներկայացուցիչների հարցում (153 մասնակից),
- Ձեռնարկությունների հարցում (100 կազմակերպություն) և ֆոկուս-խմբային հարցազրույցներ ֆինանսաբանկային և ծառայությունների ոլորտների ներկայացուցիչների հետ։

Վենետիկի Կա'Ֆոսկարի համալսարանի և Երևանի պետական համալսարանի ուսանողների և շրջանավարտների շրջանում անցկացված հարցման արդյունքում պարզվել է Կարիերայի կենտրոնի գործունեության վերաբերյալ ուսանողների իրազեկվածությունը և ծառայությունների փաստացի օգտագործման գնահատականը։ Արդյունքները վկայում են, որ իրազեկվածությունը երկու բուհերում էլ համեմատաբար բարձր է՝ Կա'Ֆոսկարիի ուսանողների շուրջ 80%-ը և ԵՊՀ ուսանողների 70%-ը տեղյակ են Կարիերայի կենտրոնի առկայության և գործառույթների մասին։ Սակայն փաստացի օգտագործման ցուցանիշներն էականորեն ցածր են՝ համապատասխանաբար 48% և 23% *(տե՛ս Գծապատկեր 4)։*

Իրազեկվածության և փաստացի օգտագործման միջև առկա այս բացը հետազոտության առանցքային արդյունքներից մեկն է։ UIGS մոդելի տեսանկյունից այս արդյունքները կարևոր են, քանի որ ցույց են տալիս, որ համագործակցության արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն ինստիտուցիոնալ կառույցների առկայությամբ, այլև այն մեխանիզմներով, որոնց միջոցով ուսանողները փաստացի ներգրավվում են դրանց գործունեության մեջ։



Գծապատկեր 4. Կարիերայի կենտրոնի ծառայությունների իրազեկվածությունը և փաստացի օգտագործումը Կա՛Ֆոսկարի համալսարանում և ԵՊՀ-ում (%)[8]

Զբաղվածության միտումների վերլուծությունը *(տե՛ս Գծապատկեր 5)* բացահայտել է էական տարբերություններ երկու բուհերում.



Գծապատկեր 5. Զբաղված և ակտիվորեն աշխատանք փնտրող հարցվածների բաշխումը՝ ըստ բուհերի (%)[9]

Կա՛Ֆոսկարի համալսարանում հարցվածների միայն 25%-ն է զբաղված, մինչդեռ ԵՊՀ-ում՝ 69%-ը, ինչը մասամբ պայմանավորված է ԵՊՀ ընտրանքում շրջանավարտների բարձր տեսակարար կշռով (37%)։

8 Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ ուսանող/շրջանավարտների շրջանում անցակացված հարցումների արդյունքների հիման վրա:

9 Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ ուսանող/շրջանավարտների շրջանում անցակացված հարցումների արդյունքների հիման վրա:

Միևնույն ժամանակ Կա'Ֆոսկարի համալսարանում ուսանողների 67%-ը գտնվում է աշխատանքի ակտիվ որոնման փուլում, ինչը նշանակում է, որ չզբաղված ուսանողների ճնշող մեծամասնությունն ակտիվորեն ձգտում է մուտք գործել աշխատաշուկա։ ԵՊՀ-ում, չնայած զբաղվածության բարձր մակարդակին, հարցվածների 46%-ը շարունակում է ակտիվորեն աշխատանք փնտրել, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ զբաղված ուսանողների և շրջանավարտների զգալի մասը բավարարված չէ իր ներկայիս աշխատանքով և որոնում է առավել համապատասխան զբաղվածության հնարավորություններ։

Երկու բուհերում ձեռնարկատիրական մտադրությունների համեմատական ուսումնասիրությունը բացահայտել է էական տարբերություն՝ ստարտափ գաղափար ունեցող ուսանողների տեսակարար կշիռը ԵՊՀ-ում կազմել է 38%, մինչդեռ Կա՛Ֆոսկարի համալսարանում՝ ընդամենը 20% *(տե՛ս Գծապատկեր 6)*:



Գծապատկեր 6. Ստարտափ գաղափար ունեցած ուսանողների տեսակարար կշիռը՝ ըստ համալսարանների, %[10]

Այս տարբերությունն առավել ուշագրավ է այն համատեքստում, որ Կա՛Ֆոսկարի համալսարանը զործում է ինստիտուցիոնալ առումով զգալիորեն ավելի զարգացած ձեռնարկատիրական էկոհամակարգում։ ԵՊՀ ուսանողների համեմատաբար բարձր ձեռնարկատիրական ակտիվությունը կարող է արտացոլել անհատական ավելի ուժեղ մոտիվացիա այնպիսի միջավայրում, որտեղ ֆորմալ զբաղվածության հնարավորությունները սահմանափակ են կամ չեն համապատասխանում շրջանավարտների որակավորումներին. այս իմաստով ձեռներեցությունը մասամբ հանդես է գալիս որպես կարիերայի այլընտրանքային ուղի։

[10] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ ուսանող/շրջանավարտների շրջանում անցակացված հարցումների արդյունքների հիման վրա։

Ստարտափ գաղափարների զարգացման փուլերի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ երկու բուհերում էլ գաղափարների մեծ մասը չի անցնում իրականացման և զարգացման հաջորդ փուլերին: Առանձնակի ուշադրության է արժանի այն հարցի վերլուծությունը, թե ստարտափ գաղափար ունեցող ուսանողները համալսարանի որ ստորաբաժանմանն են դիմել աջակցություն ստանալու նպատակով: Արդյունքները ցույց են տալիս, որ երկու բուհերում էլ համալսարանական աջակցության կառույցների օգտագործման մակարդակը ցածր է:

Այս օրինաչափությունը, կրկնվելով երկու բոլորովին տարբեր ազգային համատեքստերում, փաստում է, որ խնդիրը համակարգային է. ուսանողները ներկայում չեն գործում որպես բուհ-ձեռնարկություն էկոհամակարգի արդյունավետ միջնորդներ, ինչը հենց UIGS մոդելի կիրառման անհրաժեշտության էմպիրիկ հիմնավորումն է:

ՀՀ վեց բուհերի հարցման արդյունքներով հարցվածների 91%-ը հաստատել է ձեռնարկությունների հետ համագործակցության առկայությունը, ընդ որում՝ գերակշռում է կանոնավոր-պարբերական համագործակցությունը (48.1%): Սակայն համագործակցության հետագա վերլուծությունը ցույց է տվել, որ համագործակցությունը հիմնականում իրականացվում է անձնական կապերի միջոցով, Սա վկայում է մի կարևոր կառուցվածքային առանձնահատկության մասին, որ Հայաստանում բուհ-ձեռնարկություն համագործակցությունը հիմնականում անձնակենտրոն է, այլ ոչ թե ինստիտուցիոնալ: Հարցումների արդյունքում պարզ է դարձել, որ համագործակցությունը առավել հաճախ իրականացվում է ավանդական կապուղիների միջոցով, մասնավորապես՝ ուսումնական և արտաուսումնական պրակտիկաների (14.3%), գիտաժողովների և վերապատրաստումների (12.4%), ինչպես նաև շրջանավարտների զբաղվածության ապահովման ուղղությամբ (9.9%):

Հարցվածների 66%-ը (144-ից 95-ը) հաստատել է, որ վերջին հինգ տարիներին իրենց ֆակուլտետները մասնակցել են համատեղ հետազոտական (R&D) կամ խորհրդատվական նախագծերի: Սակայն բաց հարցերի պատասխանների վերլուծությունը ցույց է տալիս, որ նշված գործունեությունը հիմնականում կրթական բնույթ ունի, այլ ոչ թե առևտրայնացման:

Վեց բուհերում վերջին հինգ տարվա ընթացքում ստեղծվել է ընդամենը 5 սփին-օֆֆ և 8 ստարտափ (հարցվածների 8%-ը), մինչդեռ 57 հարցված որևէ ձեռներեցական նախաձեռնություն չի իրականացրել: Միաժամանակ գերակշռում են խորհրդատվական գործունեությունը (44) և խմբային աշխատանքները (52), որոնք առավելապես արտացոլում են մասնակցություն, այլ ոչ թե նոր արժեքի ստեղծում

Ֆինանսավորման համատեքստում Ֆինանսավորման հիմնական աղբյուրներն են նշվել՝ պետությունը (35%) և միջազգային կազմակերպությունները (32%), մինչդեռ մասնավոր հատվածի մասնաբաժինն ընդամենը 14% է:

Ամենատարածված ֆինանսավորման ձևը դրամաշնորհն է (52 հարցված), ապա՝ համատեղ նախագծերի ֆինանսավորումը (28) *(տե՛ս Գծապատկեր 7)*:

Համալսարանական անձնակազմի շրջանում ձեռնարկությունների հետ համագործակցությունից ակնկալվող օգուտների գնահատման արդյունքները ցույց են տվել, որ առավել բարձր են գնահատվել վերապատրաստման և ակադեմիական շարժունության հնարավորությունները (3.72), ինչպես նաև բուհի հեղինակության բարձրացման ներուժը (3.67)։ Միաժամանակ, առևտրայնացման արդյունքում ֆինանսական միջոցների ներգրավման հնարավորությունը ստացել էր ամենացածր գնահատականը (2.95)։ Ստացված արդյունքները վկայում են, որ հայաստանյան ակադեմիական միջավայրում համալսարան-ձեռնարկություն համագործակցությունը գերազանցապես դիտարկվում էր որպես մասնագիտական զարգացման և բուհի հեղինակության ամրապնդման միջոց, մինչդեռ գիտելիքի առևտրայնացման, տեխնոլոգիական փոխանցման և նորարարության խթանման գործառույթները համեմատաբար երկրորդական նշանակություն էին ստանում։

Համագործակցության **խոչընդոտների գնահատման** արդյունքները ցույց տվեցին, որ առավել նշանակալի սահմանափակող գործոններ էին ակադեմիական անձնակազմի ժամանակային ռեսուրսների սղությունը (2.80) և ֆինանսական ռեսուրսների անբավարարությունը (2.55)։ Արդյունքում՝ ձեռնարկությունների հետ համագործակցությունը դասախոսական անձնակազմի կողմից դեռևս չէր դիտարկվում որպես ակադեմիական գործունեության անբաժանելի և ինստիտուցիոնալորեն խրախուսվող բաղադրիչ։

Հետազոտության **տվյալները** հաստատում են միևնույն օրինաչափությունը բոլոր բուհերում. հայաստանյան բուհ-ձեռնարկություն համագործակցությունն ակտիվ է կրթական մակարդակում, սակայն դեռ չի հասել նորարարության և առևտրայնացման մակարդակի։

Սույն հետազոտության արդյունքների հիման վրա իրականացվել է նաև էկոնոմետրիկ վերլուծություն. մշակվել է Գործընկերության ինտենսիվության ինդեքսը (PII)՝ չորս կարգային մակարդակով (մեկանգամյա → կանոնավոր → սերտ → մշտական), և կիրառվել է օրդինալ լոգիստիկ ռեգրեսիայի մեթոդը (n = 113)։ Մոդելը ձևակերպվել է հետևյալ տեսքով.

$$PII = f\,(IS, CC, RD, FUND, BAR) \quad (3)$$[11]

Որտեղ՝

IS-ն՝ ինստիտուցիոնալ կառույցներն են,

CC-ն՝ համագործակցության կապուղիները,

[11] Բանաձևը կազմվել է հեղինակի կողմից։

RD-ն՝ հետազոտական և մշակումների գործունեությունը,
FUND-ը՝ ֆինանսավորման հասանելիությունը,
BAR-ը՝ համագործակցության խոչընդոտները:

Աղյուսակ 2.

Օրդինալ լոգիստիկ ռեգրեսիայի արդյունքները (PII, վերջնական մոդել)

Variable	Coefficient (β)	Std. Error	t-value	Odds Ratio
Collaboration Channels (CC)	0.174	0.064	0.007***	1.190
Barriers (BAR)	-0.389	0.215	0.070*	0.678

*Ծանոթ.՝ *** p < 0.01; * p < 0.10; Residual Deviance = 230.753; AIC = 240.753; N = 113*

Հետընթաց բացառման (backward elimination) եղանակով ստացված վերջնական մոդելի արդյունքները ներկայացված են *Աղյուսակ 2-ում:*
Վերջնական կրճատված մոդելը պահպանեց միայն երկու վիճակագրորեն նշանակալի փոփոխականները.

PII = f (CC, BAR) (4)[12]

Արդյունքները փաստում են, որ համագործակցության կապուղիները գործընկերության ինտենսիվության միակ վիճակագրորեն նշանակալի դրական գործոնն են: Բուհի կողմից ակտիվորեն կիրառվող յուրաքանչյուր լրացուցիչ կապուղի (պրակտիկա, համատեղ ծրագիր, գիտաժողով, հրապարակում, ցանցային միջոցառում) մոտ 19%-ով բարձրացնում է առավել ինտենսիվ գործընկերության հասնելու հավանականությունը, մինչդեռ խոչընդոտների յուրաքանչյուր միավոր աճը (բյուրոկրատիա, վստահության պակաս, ժամանակի սղություն) մոտ 32%-ով նվազեցնում է այն:

Համալսարան-ձեռնարկություն համագործակցությունն արդյունաբերության տեսանկյունից ուսումնասիրելու նպատակով անցկացվել է հարցում **100 ձեռնարկությունների ներկայացուցիչների շրջանում** (Հայաստանի գործատուների հանրապետական միության և Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության աջակցությամբ), ինչպես նաև ֆոկուս-խմբային հարցազրույցներ:

Ընտրանքի բնութագիրը: Հարցվածների 41%-ը ներկայացնում է խոշոր կազմակերպություններ (200-ից ավելի աշխատակից) և հարցման մասնակցած կազմակերպությունների մեծ մասն ունի երկարատև գործունեության տարիներ:

Այս իրավիճակը ձևավորում է էական պարադոքս. չնայած խոշոր ընկերությունների տրամադրության տակ առկա ֆինանսական և մարդկային

[12] Բանաձևը կազմվել է հեղինակի կողմից:

ռեսուրսներին՝ բուհ-ձեռնարկություն համագործակցության ֆինանսավորման պատրաստակամությունը շարունակում է մնալ սահմանափակ: Դա վկայում է, որ առկա խոչընդոտները չեն բխում բացառապես ռեսուրսային սահմանափակումներից, այլ պայմանավորված են համագործակցության ինստիտուցիոնալ միջավայրի, կազմակերպական մշակույթի և փոխադարձ արժեքի ընկալման խնդիրներով:

Համագործակցության ուղիները: Ըստ հարցման արդյունքների՝ գերակշռում են ուսումնական և արտաուսումնական պրակտիկաները (29.17%) և շրջանավարտների աշխատանքի ընդունումը (23.61%), որոնք միասին կազմում են համագործակցության կեսից ավելին: Արտոնագրերը, հովանավորվող հետազոտությունները և R&D-ն ստացել են չնչին տոկոսներ, ինչը վկայում է, որ համագործակցությունը կրում է տաղանդների հավաքագրման և աշխատակազմի համալրման, այլ ոչ թե նորարարական և առևտրայնացման բնույթ:

Հարցման պահին կազմակերպությունների 75%-ը ներդրել էր նոր կամ բարելավված ծառայություններ, 61.29%-ը՝ նոր արտադրանք, 46.67%-ը՝ նորարարական տեխնոլոգիա: Սակայն այդ նորարարությունների 87.88%-ը մշակվել է լիովին ինքնուրույն, իսկ մնացած 12.12%-ը՝ այլ կազմակերպությունների հետ համագործակցությամբ: Բուհերի հետ համագործակցությունը՝ որպես նորարարության աղբյուր, բացակայում էր:

Հարցման արդյունքում, պարզվել է, որ կազմակերպությունների համար բուհերի հետ համագործակցության գերիշխող դրդապատճառը կադրերի հավաքագրումն է (51.72%): Որպես հիմնական օգուտ՝ 45.9%-ը նշել է ուսանողական բազայի հասանելիությունը, 21.31%-ը՝ նոր գիտելիքի հասանելիությունը, և միայն 1.64%-ը՝ ֆինանսավորման հնարավորությունները:

Համագործակցության շրջանակում կազմակերպությունների կողմից ներդրվող ռեսուրսների վերլուծությունը ցույց տվեց, որ գերակշռողը մարդկային ռեսուրսներն էին (44%), մինչդեռ ֆինանսական ներդրումների պատրաստակամությունը մնաց ամենացածր մակարդակում: Սա վկայում է, որ կազմակերպությունները նախապատվություն էին տալիս համագործակցության այնպիսի ձևերին, որոնք պահանջում էին նվազագույն ֆինանսական ծախսեր և առավելապես հիմնվում էին առկա մարդկային ներուժի ներգրավման վրա:

Համագործակցությանը խոչընդոտող գործոնների գնահատման արդյունքները ցույց տվեցին, որ հիմնական խոչընդոտներից են ֆինանսական սահմանափակումները, նորարարության բարձր ծախսերը, տնտեսական ռիսկերը, շուկայում մենաշնորհը, բյուրոկրատիան և կանոնակարգերի ոչ ճկունությունը: Անցկացվել են երկու ֆոկուս-խմբային հարցազրույցներ՝ ֆինանսաբանկային (8 կազմակերպություն) և սպասարկման (8 կազմակերպություն) ոլորտների ներկայացուցիչներով: Ֆոկուս-խմբերի արդյունքները բացահայտեցին

համագործակցության արդյունավետության վրա ազդող մի առանցքային գործոն՝ փոխվստահության պակասը, որը դուրս էր հարցման գործիքակազմի ուղղակի չափման հնարավորություններից: Ֆինանսաբանկային ոլորտի ներկայացուցիչները մասնավորապես մատնանշեցին բուհական հետազոտությունների որակի, կիրառելիության և գործնական արժեքի նկատմամբ անվստահությունը՝ այն դիտարկելով որպես բուհ-ձեռնարկություն համագործակցության զարգացման հիմնական խոչընդոտներից մեկը: Այսպես՝ հարցումը ֆինանսական ներդրումը դասում է ամենացածր կատեգորիաներում, մինչդեռ ֆոկուս-խմբերի մասնակիցները հայտարարել են, որ ֆինանսական ռեսուրսները խոչընդոտ չեն: Սա վկայում է, որ խնդիրը ոչ թե ֆինանսական կարողությունն է, այլ ֆինանսական պատրաստակամությունը. կազմակերպությունները ռեսուրսներ ունեն, բայց համոզված չեն դրանք բուհերի հետ գործընկերության մեջ ներդնելու հարցում:

Հայաստանյան կազմակերպությունները բուհերի հետ համագործակցում են հիմնականում մեկ խնդիր լուծելու համար՝ աշխատուժ հավաքագրել: Ավելին ձեռնարկությունները սովորել են նորարարություն իրականացնել առանց բուհերի, ինչը նշանակում է, որ բուհերը ներկայում չեն առաջարկում որևէ բան, որ ձեռնարկությունը չի կարող անել ինքնուրույն:

Ատենախոսությունը եզրափակվում է **«Եզրակացություններ և առաջարկություններ»** բաժնով, որտեղ ատենախոսական աշխատանքում իրականացված ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա ձևակերպվել են հետևյալ ընդհանրական եզրակացությունները և առաջարկությունները.

- Բուհ-ձեռնարկություն համագործակցության տեսահայեցակարգային շրջանակում կիրառվող Triple Helix և Quintuple Helix մոդելներն ուսանողներին և շրջանավարտներին դիտարկում են որպես բուհական համակարգի արդյունք, այլ ոչ թե որպես համագործակցության գործընթացի ակտիվ և ինքնուրույն դերակատարներ: Ի լրումն առկա մոդելների՝ սույն ատենախոսության շրջանակում մշակվել է Բուհ-Ձեռնարկություն-Կառավարություն-Ուսանող/Շրջանավարտ (UIGS) ընդլայնված մոդելը, որտեղ ուսանողները և շրջանավարտները ներկայացվում են որպես բուհ-ձեռնարկություն համագործակցության անկախ և միջնորդավորված դերակատարներ:
- Ատենախոսության շրջանակում մշակված համագործակցության կապուղիների հիերարխիկ դասակարգման մոտեցումը հիմնված է այն կանխադրույթի վրա, որ արդյունավետ և կայուն գործընկերությունն ինքնանպատակ չէ: Այն զարգանում է փուլերով՝ սկսելով հաղորդակցության ամենապարզ ձևերից աստիճանաբար վերաճելով առավել բարդ ու հասուն համագործակցության ձևերի, ինչպիսիք են

համատեղ գիտահետազոտական ծրագրերը, նորարարությունը, ստարտափների ստեղծումը և գիտելիքի առևտրայնացումը: Այս առումով առաջարկվող դասակարգումն իրականացվում է ժամանակի գործոնի հաշվառմամբ և համագործակցության կապուղիները չեն դիտարկվում որպես միմյանցից անկախ գործողություններ: Դրանք ներկայացվում են որպես բուհ-ձեռնարկություն գործընկերության ձևավորման և զարգացման միասնական գործընթացում:

- Բուհ-ձեռնարկություն համագործակցության համատեքստում Շվեդիայի, Գերմանիայի, Իտալիայի և Բուլղարիայի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ նորարարական կատարողականը պայմանավորված չէ բացառապես քաղաքականության ձևական շրջանակներով կամ ֆինանսական ներդրումների ծավալով, այլ ինստիտուցիոնալ էկոհամակարգերի որակով, համագործակցության կապուղիներով, համագործակցության մշակույթով և կողմերի միջև վստահությամբ:
- Վենետիկի Կա՛Ֆոսկարի համալսարանում և Երևանի պետական համալսարանում անցկացված ուսանող/շրջանավարտների հարցումները հաստատեցին, որ ուսանողները ներկայում արդյունավետ միջնորդ չեն բուհ-ձեռնարկություն էկոհամակարգում: Նորարարական գաղափարներով ուսանողները հետաքրքրություն չեն ցուցաբերել որևէ համալսարանական ստորաբաժանումից աջակցություն ստանալու հարցում: Այս օրինաչափությունը հետևողական էր երկու բոլորովին տարբեր ազգային համատեքստերում գործող բուհական հաստատություններում, ինչը ցույց է տալիս, որ ուսանողների այս մոտեցումը ոչ թե համալսարանի կամ միջավայրի, այլ համակարգային խնդիր է:
- Հայաստանի օրենսդրական և ռազմավարական շրջանակի վերլուծությունը ցույց է տալիս, որ երկիրը հաստատել է գիտելիքի փոխանցման, հետազոտությունների առևտրայնացման և բուհ-ձեռնարկություն համագործակցության նկատմամբ աճող ինստիտուցիոնալ պարտավորվածություն: Ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրահանգել, որ Հայաստանը հաջողությամբ ստեղծել է բուհ-ձեռնարկություն համագործակցության օրենսդրական և ռազմավարական հիմքերը, ուստի հիմնական մարտահրավերն այլևս քաղաքականության շրջանակների բացակայությունը չէ, այլ դրանց գործարկման արդյունավետությունն ապահովող համագործակցային

կապուղիների թույլ զարգացվածությունն ու սահմանափակ գործունակությունը:

• ՀՀ թվով վեց բուհերում իրականացված հարցման արդյունքները հաստատում են, որ բուհ-ձեռնարկություն համագործակցությունն իրականում գոյություն ունեցող պրակտիկա է, սակայն այն կրում է ոչ ինստիտուցիոնալ բնույթ և մեծապես հիմնված է անձնական կապերի վրա և օգտագործվում են համագործակցության առավել ավանդական կապուղիները: Կարիերայի կենտրոնները գրեթե բոլոր բուհերում նույնականացվել են որպես հիմնական ինստիտուցիոնալ կառույց, մինչդեռ Ձեռներեցության զարգացման կենտրոնները և տեխնոլոգային փոխանցման գրասենյակները մնացել են երկրորդական կամ բացարձակ բացակայող:

• Հետազոտության ընթացքում իրականացված էկոնոմետրիկ վերլուծությունը ցույց է տվել, որ համագործակցության կապուղիները գործընկերության ինտենսիվության միակ վիճակագրորեն նշանակալի դրական որոշիչն են, մինչդեռ խոչընդոտները զգալի բացասական ազդեցություն են ունենում: Այն ուղղակիորեն վավերացնում է հիերարխիկ համագործակցության կապուղիների շրջանակը որպես Հայաստանում բուհ-ձեռնարկություն համագործակցությունն ամրապնդելու ամենակարևոր լծակ և հաստատում է միջազգային փորձի եզրակացությունը, որ ֆինանսական ներդրումը միայն բավարար չէ նորարարության ոլորտում առաջատար դառնալու համար:

• ՀՀ թվով հարյուր կազմակերպությունների շրջանում անցկացված հարցումը և ֆոկուս խմբի հարցազրույցները հաստատել են, որ հայկական ձեռնարկությունները բուհերի հետ համագործակցում են հիմնականում մեկ խնդիր լուծելու համար՝ տաղանդների ներգրավում: Հարցման և ֆոկուս խմբի արդյունքների համեմատական վերլուծությունը հաստատել է, որ համագործակցության խոչընդոտը ֆինանսական կարողությունը չէ, այլ ֆինանսական պատրաստակամությունը. կազմակերպությունները ռեսուրսներ ունեն, սակայն դեռ չեն հավատում, որ դրանց ներդրումը բուհական գործընկերություններում հուսալի արդյունք կտա:

• Առաջարկվում է «Ակադեմիական քաղաք» ծրագրի շրջանակում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության նախաձեռնությամբ UIGS մոդելն ամրագրել որպես երկրում բուհ–ձեռնարկություն գործընկերության զարգացման հիմնարար շրջանակ: Այդ նպատակով «Ակադեմիական քաղաք» ծրագրի հիմքում ձևավորված

կլաստերները և միավորված համալսարանները պետք է յուրաքանչյուր ֆակուլտետում ձևավորեն ուսանող–ձեռնարկություն կապ ապահովող կառույց, որտեղ գիտական աշխատանքներով զբաղվող (դիպլոմային աշխատանք, մագիստրոսական թեզ, ատենախոսական աշխատանք), կամ ձեռնարկատիրական գաղափարներ կրող ուսանողները նպատակային կհամագործակցեն ձեռնարկության այն գործընկերների հետ, որոնք ունեն կոնկրետ լուծում պահանջող խնդիրներ։ Զուգահեռ նման միջավայրերի ստեղծմանը՝ ուսանողների և շրջանավարտների արդյունքները պետք է ինտեգրվեն բուհ-ձեռնարկություն համագործակցության ազգային մոնիթորինգի համակարգում՝ համագործակցության արդյունավետությունը չափող առանցքային KPI-ների միջոցով։

- Հաշվի առնելով ՀՀ-ում ձեռնարկությունների ֆինանսական ռեսուրսներ ներդնելու պասիվ գործելակերպը, ատենախոսությունում մշակվել է «Ձեռնարկատիրական վաուչերների» փորձնական ծրագիր՝ Իռլանդիայի և Նիդեռլանդների փորձի տեղայնացմամբ։ Ծրագրի շրջանակում պետությունը մասնակից ձեռնարկություններին (փորձնական փուլում՝ 20-30 ընկերություն) տրամադրում է մեկանգամյա 2-5 մլն դրամ արժողությամբ վաուչեր, որը կարող է օգտագործվել բացառապես հայաստանյան բուհից հետազոտական արդյունք, արտադրանքի նախատիպ, վերլուծական ուսումնասիրություն կամ տեխնոլոգիական լուծում պատվիրելու նպատակով։ Ծրագիրն առաջարկվում է իրականացնել Գիտության ոլորտի զարգացման 2026-2030 թթ. ռազմավարական ծրագրի G2.4.4 միջոցառման ներքո՝ «Ակադեմիական քաղաք» ծրագրի շրջանակում։

✓ Հաշվի առնելով, որ բուհ-ձեռնարկություն համագործակցությունը ՀՀ-ում մնում է մասնատված, ոչ լիարժեք ինստիտուցիոնալացված և կապուղիների ավանդական ձևաչափերի օգտագործմամբ, առաջարկվում է հիերարխիկ համագործակցության կապուղիների շրջանակի ներդրումը, որը հիմնված է առանցքային գնահատման ցուցանիշների և UIGS ինդեքսի հաշվարկի վրա։ Այս շրջանակը պետք է դառնա ՀՀ բարձրագույն կրթության համակարգի ռազմավարական գնահատման, բուհերի տարեկան հաշվետվությունների և կրթության ազգային մոնիթորինգային համակարգի անբաժանելի բաղադրիչ։ Սույն ատենախոսությունում մշակված հիերարխիկ KPI-ների վրա հիմնված համագործակցության ուղիների շրջանակն առաջարկվում է որպես ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության համար

լրացուցիչ մեթոդաբանական գործիք, որը նպատակ ունի լրացնել և ամրապնդել KPI4HEIs ծրագրի N1, N3 և N4 ուղղությունների ընթացիկ իրականացման գործընթացները՝ բուհ-ձեռնարկություն համագործակցության համատեքստում:

Ատենախոսության հիմնական արդյունքները և դրույթները հրատարակվել են հետևյալ գիտական հոդվածներում՝

1. **Նիկողոսյան Ք.,** «Բուհ-կազմակերպություն համագործակցության կառուցակարգերը և ուղիները (ԵՄ և ԵԱՏՄ երկրների օրինակով)», **«Բանբեր Երևանի համալսարանի. Տնտեսագիտություն»**, 11, 2 (32), Երևան, 2020, էջ 36-46, https://journals.ysu.am/bulletin-ysu-economics/issue/view/Vol.11_No.2_2020
2. **Նիկողոսյան Ք.,** «Բուհ-կազմակերպություն համագործակցության նախադրյալներն ու խնդիրները», **«Պատմություն և Քաղաքականություն»** գիտական հանդես, № 1(6), Երևան, 2020, էջ 133-141: https://generalnews.am/hy/archive/
3. **Նիկողոսյան Ք., Խաչատրյան Կ.,** «Բուհ-կազմակերպություն համագործակցության ինստիտուցիոնալ խնդիրները ՀՀ-ում», **«Լրաբեր հասարակական գիտությունների»,** № 1(664), Երևան, 2022, էջ 57-72, https://arar.sci.am/dlibra/publication/346422/edition/319126
4. **Նիկողոսյան Ք., Խաչատրյան Կ., Հակոբջանյան Ա.,** «Ուսանողների և շրջանավարտների զբաղվածության և կարիերայի աճի հնարավորությունները բուհ-կազմակերպություն համագործակցության շրջանակներում», **«Պատմություն և Քաղաքականություն»** գիտական հանդես, № 4(21), Երևան, 2022, էջ 143-162: https://generalnews.am/hy/archive/
5. **Nikoghosyan K., Khachatryan K., Hakobjanyan A.,** "University-Industry Partnership: Literature Review of the Collaboration Channels and Motivations. The Case Study of Yerevan State University", «**Review of Economics and Finance**», Vol. 21, 2023, pp. 1205-1219, https://refpress.org/ref-vol21-a133/
6. **Nikoghosyan K., Khachatryan K., Hakobjanyan A., Keryan T.,** "Development of University-Industry Partnership in Armenia: University Perspective", «**Journal of International Education in Business**», 17(1), Emerald Publishing, 2024, pp. 170-192, https://www.sciencedirect.com/org/science/article/abs/pii/S2046469X23000021
7. **Nikoghosyan K., Khachatryan K., Hakobjanyan A.,** "Bridging Academia and Industry: Unraveling University-Industry Collaborations in the EU and Transitioning Economies: Insights from Armenia and Italy", **YSU Press,** (Monography) Yerevan, 2024, 165 էջ, http://publishing.ysu.am/en/1722311632

Никогосян Кристине Валериковна

ПЕРСПЕКТИВЫ ПАРТНЕРСТВА ВУЗОВ И ПРЕДПРИЯТИЙ В АРМЕНИИ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 - «Экономика и управление народным хозяйством и его отряслями».

Защита диссертации состоится 26-го августа 2026г. в 15:00 часов, на заседании Специализированного совета 015Комитета по высшему образованию и науке Республики Армения действующего в Ереванском государственном университете, по адресу: 0025, г. Ереван, ул. Х. Абовяна 52

АННОТАЦИЯ

Эффективное сотрудничество вузов и бизнеса способствует повышению трудоустраиваемости выпускников, сокращению несоответствия между образовательными результатами и требованиями рынка труда, повышению качества и актуальности высшего образования, а на макроэкономическом уровне росту инновационного потенциала, производительности труда и экономическому росту. Несмотря на то, что армянская система высшего образования обладает значительным академическим потенциалом, научными традициями и ресурсами человеческого капитала, сотрудничество между вузами и предприятиями в Республике Армения остается фрагментированным, недостаточно развитым и слабо институционализированным. Существующие механизмы сотрудничества характеризуются слабыми каналами коммуникации, ограниченной коммерциализацией академических исследований, недостаточными финансовыми ресурсами, отсутствием инфраструктур трансфера технологий и несоответствием образовательных результатов требованиям рынка труда. Этим обусловлена актуальность исследования.

Цель и задачи исследования: Целью исследования является анализ потенциала развития и текущего состояния партнерства вузов и предприятий в Республике Армения, выявление его институциональных и организационно-функциональных особенностей, а также разработка комплексной методологической основы для мониторинга и развития данного партнерства. Для достижения поставленной цели в диссертации были поставлены и решены **следующие основные задачи**:

- изучить теоретические и концептуальные основы партнерства вузов и предприятий, выявив его основные рамки, ключевых заинтересованных сторон и современные подходы к его развитию,
- проанализировать основные каналы сотрудничества, институциональные структуры, механизмы трансфера технологий и взаимодействие заинтересованных сторон, поддерживающие партнерство вузов и предприятий,
- исследовать политические рамки, инновационные экосистемы, правовое регулирование, механизмы защиты интеллектуальной собственности и участие в

международных программах исследований и инноваций, способствующие развитию партнерства вузов и предприятий в Европейском союзе и Армении,

- провести сравнительную оценку развития партнерства вузов и предприятий в отдельных странах Европейского союза, развивающихся экономиках и в Армении на основе показателей инноваций, исследований, сотрудничества и рынка труда,
- проанализировать текущее состояние партнерства вузов и предприятий в Армении с точки зрения государства, университетов, студентов/выпускников и представителей бизнеса,
- выявить институциональные, правовые, финансовые и функциональные проблемы, влияющие на развитие партнерства вузов и предприятий в Армении,
- исследовать эффективность существующих каналов сотрудничества и институциональных механизмов поддержки в высших учебных заведениях Армении.

Объектом исследования является система партнерства вузов и предприятий в Республике Армения.

Предметом исследования являются институциональные структуры, каналы и механизмы сотрудничества, а также взаимодействие между университетами, предприятиями, государством и студентами/выпускниками.

Научная новизна диссертации. На основе исследования, проведенного в рамках диссертации, получен ряд результатов, из которых основными положениями, отражающими научную новизну, являются:

- Разработана и адаптирована к условиям Республики Армения расширенная модель «Университет–Предприятие–Государство–Студент/Выпускник» (UIGS), на основе которой сформирована иерархическая система каналов сотрудничества.
- Рассчитан индекс интенсивности партнерства (Partnership Intensity Index, PII) для сотрудничества вузов и предприятий с применением метода порядковой логистической регрессии.
- Разработана система ключевых показателей эффективности (KPI) для оценки каналов сотрудничества и их подтипов, а также предложен расчет индекса UIGS как инструмента сравнительного анализа и мониторинга университетов.
- Сотрудничество вузов и предприятий исследовано на основе многостороннего подхода, объединяющего позиции университетов, предприятий, студентов/выпускников и государственных институтов.

Nikoghosyan Kristine Valerik

THE PROSPECTS OF UNIVERSITY-INDUSTRY PARTNERSHIP IN ARMENIA

Abstract of the thesis for receiving the degree of the PhD in Economics for the specialty 08.00.02 – "Economy, the economics of its spheres and control''.

The defense of the dissertation will take place on August 26th, 2026, at 15:00 PM, at the Meeting of the Specialized Council 015 in Economics of the Higher Education and Science Committee of the Republic of Armenia acting at the Yerevan State University, by address:
52 Abovyan str., Yerevan, 0025

ABSTRACT

The partnership between universities and industry is considered one of the key factors in developing human capital and ensuring the competitiveness of a knowledge-based economy. Effective university-industry collaboration can increase graduate employability, reduce labor market mismatch, improve the quality and relevance of higher education, and, at the macroeconomic level, contribute to increased innovation capacity, labor productivity, and overall economic growth. Although the Armenian higher education sector possesses considerable academic potential, scientific traditions, and human capital resources, university-industry collaboration in the Republic of Armenia remains fragmented, underdeveloped, and insufficiently institutionalized. Existing cooperation mechanisms are often characterized by weak communication channels, limited commercialization of academic research, insufficient financial resources, absence of technology transfer infrastructures, and inadequate alignment between educational outcomes and labor market requirements. These circumstances determine the relevance and urgency of the present research.

The Purpose and Objectives of the Research: The objective of the research is to analyze the development potential and current state of university-industry partnership in the Republic of Armenia, to identify its institutional and organizational & functional characteristics, as well as to develop a comprehensive methodological framework for monitoring and advancing this partnership. In line with the research objective, the following **tasks** were proposed and solved in the dissertation:

- to examine the theoretical and conceptual foundations of university-industry partnership, identifying its main framework, key stakeholders, and contemporary approaches to its development,
- to analyze the main collaboration channels, institutional structures, technology transfer mechanisms, and stakeholder interactions supporting university-industry partnership,
- to investigate the policy frameworks, innovation ecosystems, legal regulations, intellectual property protection mechanisms, and participation in international research and innovation programs promoting university-industry partnership in the European Union and Armenia,

- to conduct a comparative assessment of university-industry partnership development in selected European Union countries, developing economies, and in Armenia based on innovation, research, collaboration, and labor market indicators,
- to analyze the current state of university-industry partnership in Armenia from the perspectives of government, universities, students/graduates, and industry representatives,
- to identify institutional, legal, financial, and functional challenges affecting the development of university-industry partnership in Armenia,
- to examine the effectiveness of existing collaboration channels and institutional support mechanisms within Armenian higher education institutions.

The object of the research is the university-industry partnership system in the Republic of Armenia**. The subject** of the research is the institutional structures, collaboration channels & mechanisms, and interactions among universities, industries, government, and students/graduates.

The scientific novelty of the dissertation. Based on the research conducted within the framework of the dissertation, a number of results were obtained, among which the main provisions reflecting scientific novelty are:

- The expanded University-Industry-Government-Student/Graduate (UIGS) model was developed and adapted to the conditions of the Republic of Armenia, on the basis of which a hierarchical framework of cooperation channels was developed.
- The Partnership Intensity Index (PII) for university-industry cooperation was calculated, applying the ordinal logistic regression method.
- A system of Key Performance Indicators (KPIs) was developed for evaluating cooperation channels and their subtypes, and a calculation of the UIGS index was proposed as a tool for comparative analysis and monitoring of universities.
- University-industry cooperation was studied using a multi-stakeholder approach, combining the perspectives of universities, enterprises, students/graduates, and government institutions.